Նախագահ
Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության
Առաջին Խորհրդական



Որքան մեծ կլինի ձեր ուրախությունը

Կյանքում քիչ ուրախություններ կան, որ ավելի քաղցր ու ավելի տևական են, քան իմանալը, որ դուք օգնել եք հասցնել Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը ուրիշների սրտերին: Եկեղեցու յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունի ունենալու այդ ուրախությունը: Երբ մենք մկրտվում ենք, մենք խոստանում ենք «կանգնելու որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում, որ [մենք] կարող է լինենք, նույնիսկ մինչև մահ, որպեսզի [մենք] կարողանանք փրկագնվել Աստծո կողմից և համարվենք նրանց հետ, ովքեր պատկանում են առաջին հարությանը, որպեսզի [մենք] կարողանանք հավերժական կյանք ունենալ» (Մոսիա 18.9):

Բոլոր անդամները ընդունում են Հիսուս Քրիստոսի ավետարանը աշխարհին հասցնելու Եկեղեցուն տրված պատասխանատվության մի մասը՝ որտեղ և որքան էլ նրանք ապրելու լինեն: Տերը սա պարզ ասում է. «Ահա, ես ուղարկել էի ձեզ՝ վկայելու և զգուշացնելու մարդկանց, և ամեն մարդ, ով զգուշացվել է, պետք է զգուշացնի իր մերձավորին» (ՎևՈՒ 88.81): Լիաժամկետ միսիոներները զորություն ունեն սովորեցնելու նրանց, ովքեր դեռ Եկեղեցու անդամ չեն: Եկեղեցու անդամները զորություն ունեն գտնել նրանց, ում Տերը պատրաստել է միսիոներների կողմից ուսուցանվելու համար:

Մենք պետք է հավատք ցուցաբերենք առ այն, որ Տերը պատրաստել է մեր շուրջը գտնվող մարդկանց ուսուցանվելու: Նա գիտի նրանց և թե երբ են նրանք պատրաստ, և Սուրբ Հոգու զորությամբ Նա կարող է առաջնորդել մեզ նրանց մոտ և բառեր տալ մեզ՝ նրանց ուսուցանվելու հրավիրելու համար: Խոստումը, որը Տերը տվել էր մի միսիոների 1832թ. նաև խոստում է, որը Նա տվել է մեզ կապված մեր պարտավորության հետ՝ գտնել մարդկանց, որոնք պատրաստ են միսիոներների կողմից ուսուցանվելու. «Եվ ես նրա վրա կուղարկեմ Մխիթարիչին, որը նրան կսովորեցնի ճշմարտությունը և այն ճանապարհը, որով նա պետք է գնա. Եվ որքան որ նա հավատարիմ կլինի, ես կրկին կպսակեմ նրան որաներով» (ՎևՈՒ 79.2–3):

Եվ հավատարիմ միսիոներին տրված մեծ ուրախության խոստումը նույնպես մերն է, եթե մենք հավատարիմ անդամներ ենք, ովքեր տալիս են իրենց սիրտը միսիոներական աշխատանքին.

«Եվ արդ, եթե ձեր ուրախությունը մեծ կլինի մեկ հոգու հետ, որին դուք բերել եք ինձ մոտ՝ իմ Հոր արքայություն, որքա՜ն մեծ կլինի ձեր ուրախությունը, եթե դուք շատ հոգիներ բերեք ինձ մոտ:

Սահ, դուք ունեք ձեր առաջ իմ ավետարանը և իմ վեմը և իմ փրկությունը:

Խնդրեք Հորը՝ իմ անունով, հավատքով հավատալով, որ պիտի ստանաք, և դուք կունենաք Սուրբ Հոգին, որը ցույց է տալիս բոլոր բաները, որոնք նպատակահարմար են մարդկանց զավակների համար» (ՎԿՈՒ 18.16–18):

Ի հավելումն այն բանի, որ Սուրբ Հոգին օգնում է մեզ իմանալ, թե ովքեր են պատրաստ ուսուցանվելու, և հրավիրում է նրանց, Տերը կանչել և պատրաստել է ղեկավարների՝ մեզ առաջնորդելու համար: Փետրվարի 28, 2002թ. նամակում Առաջին Նախագահությունը միսիոներական աշխատանքի համար մեծ պատասխանատվություն դրեց եպիսկոպոսների և ծխերի վրա:[1] Ծխի կամ ճյուղի խորհրդականի օգնությամբ քահանայության գործադիր հանձնաժողովը միսիոներական ծրագիր է մշակում անդամների համար: Այդ ծրագիրը խորհուրդներ է պարունակում, թե ինչպես անդամները կարող են գտնել նրանց, ովքեր պատրաստ են ուսուցանվելու միսիոներների կողմից: Կա մի անձ, որը կոչվում է ծխի կամ ճյուղի միսիայի ղեկավար: Այդ միսիայի ղեկավարը սերտ կապի մեջ է լիաժամկետ միսիոներների և նրանց լսողների միջև:

Բազում միջոցներ կան, որոնցով դուք կարող եք լավագույնս իրականացնել ձեր անձնական պարտավորությունը՝ օգնել գտնել մարդկանց, որոնց միսիոներները կսովորեցնեն: Ամենապարզ միջոցը կլինի լավագույնը:

Աղոթեք Սուրբ Հոգու կողմից առաջնորդվելու համար: Խոսեք տեղային ղեկավարների և միսիոներների հետ՝ նրանցից խորհուրդներ հարցնելով և խոստանալով նրանց ձեր օգնությունը: Խրախուսեք նրանց, ովքեր ձեզ հետ ներգրավված են այս աշխատանքի մեջ: Եվ վկա եղեք բոլոր ժամանակներում ձեր խոսքով և գործով, որ Հիսուսը Քրիստոսն է, և որ Աստված պատասխանում է աղոթքներին:

Ես վկայում եմ, որ Սուրբ Հոգին կառաջնորդի ձեզ դեպի նրանց, ովքեր փնտրում են ճշմարտությունը, եթե դուք աղոթեք և աշխատեք այդ առաջնորդության համար: Եվ ես իմ փորձով գիտեմ, որ այդ ուրախությունը տևական կլինի նրանց հետ, ովքեր ընտրում են ընդունել ավետարանը իրենց սրտերում և այնուհետև համբերում են հավատքով:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես «Եկեղեցու նորությունները. Հատուկ Ուշադրություն Դարձնել Ծխի կամ Ճյուղի Միսիոներական Աշխատանքին», *Լիահոնա*, Օգոստոս 2002,4

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

- *Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում* սովորեցնում է մեզ քաջալերել նրանց, ում մենք ուսուցանում ենք, նպատակներ դնել, որոնք կօգնեն նրանց ապրել իրենց սովորած սկզբունքներով (տես էջ 159): Ընտանիքի հետ կիսվեք միսիոներական աշխատանքի օրհնություններով, որոնք նշվում են Նախագահ Այրինգի կողմից և, եթե այդպես հուշվի ձեզ, հրավիրեք ընտանիքին ավետարանով կիսվելու նպատակներ դնել:
- Ընտանիքի հետ միասին մտածեք ավետարանով կիսվելու նոր ճանապարհներ գտնելու ուղղությամբ, հիշելով նախագահ Այրինգի խորհուրդը, որ «ամենապարզ ճանապարհը լավագույնը կլինի»: Նոր ճանապարհներ գտնելու համար տես *Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում,* էջ 160:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Իմ կյանքի բազում միսիոներները

Էլիզաբեթ Ս. Սթայլս

Առաջին կիրակին, երբ ես միսիոներների հետ այցելեցի եկեղեցի, ես նկատեցի մարդկանց, որոնց հետ ես մեծացել էի և որոնց ճանաչում էի դեռ համայնքից: Ես տեսա իմ դպրոցական լավագույն ընկերներից մեկին, տարրական և ավագ դպրոցի քարտուղարներին, մի աղջկա, ում անցյալում առանձնապես լավ չէի վերաբերվում, և նույնիսկ մի երիտասարդի, ում մի ժամանակ սիրահարված էի:

Այս անձնավորություններից յուրաքանչյուրը տևական ազդեցություն ունեցավ ինձ վրա: Իմ լավագույն ընկերը երիտասարդ կին էր, որն ուներ մեծ ազնվություն, և նրա պատճառով ես շարունակեցի հետաքրքրվել Եկեղեցով: Քարտուղարները, որոնք հիշեցին ինձ դպրոցից, օգնեցին ինձ իմանալ, որ ես կարևոր եմ: Ես սովորեցի աստվածային սիրո և գթության մասին երիտասարդ կնոջից, ով գրկաբաց

ընդունեց ինձ՝ անտեսելով իմ նրա հանդեմ ոչ այնքան բարի վերաբերմունքն անցյալում: Երիտասարդը, ում սիրել էի պատանեկության տարիներին, հրաշալի օրինակ եղավ ինձ համար, ես նկատում էի նրա լույսը և ուզում էի նրա կողքին լինել:

Այս փորձառությունները օգնեցին ինձ սովորել, նույնիսկ միսիոներների հետ իմ առաջին ծանոթությունից առաջ, որ Երկնային Հայրը պատրաստել էր ինձ ավետարանն ընդունելուն այն մարդկանց միջոցով, ովքեր իմ շուրջն էին: Այդ ժամանակ ես սովորեցի, որ փոքր բաները, որ մենք անում ենք, կարող են մեծ ազդեցություն ունենալ:Ամենակարևորը, ես սովորեցի, որ միսիոներական աշխատանքը սկսվում է ինձնից:

ԵՐԵԽԱՆԵՐ

Ավետարան՝ պարգև, որով պետք է կիսվել

Ավետարան բառը նշանակում է Հիսուս Քրիստոսի և Նրա մարգարեների կողմից մեզ տրված բոլոր ուսմունքներն ու արարողությունները: Ավետարանը նման է մի զամբյուղի, որը լցված է Երկնային Հոր կողմից տրված պարգևներով: Դուք կարող եք օգնել տալ այս պարգևները ուրիշ մարդկանց: Ու՞մ հետ դուք կարող եք կիսվել ավետարանի պարգևով:

Կարդացեք այս սուրբ գրությունների հատվածներից յուրաքանչյուրը և ավետարանի որոշ պարգևների նկարների շարք կազմեք:

1. Հակոբոս Ե.14–15
2. Մոսիա 16.6–7
3. 3 Նեփի 18.1–10
4. ՎևՈւ 20.72–73
5. ՎևՈւ 33.16
6. ՎևՈւ 89.4,18–21
7. ՎևՈւ 132.46
8. ՎևՈւ 137.10
9. ՎևՈւ 138.32–34

© 2011 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/10: Թարգմանության հաստատումը. 6/10: *First Presidency Message, February 2011*-ի թարգմանությունը: Armenian: 09762 201

Բոլոր բաների վերականգնումը

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և դարձնել Սփոփող Միությունը ձեր իսկ կյանքի ակտիվ մասը:

Հավատք • Ընտանիք • Սփոփանք

Ջոզեֆ Սմիթ Մարգարեն կազմակերպեց Սփոսփող Միությունը որպես Եկեղեցու կարևոր մաս: Որպես նախագահություն, մենք հույսով ենք, կկարողանանք օգնել ձեզ հասկանալ, թե ինչու է Սփոսող Միությունը կարևոր ձեր կյանքում:

Մենք գիտենք, որ Նոր Կտակարանի կանայք հավատք ցուցաբերեցին առ Հիսուս Քրիստոս և մասնակցեցին Նրա աշխատանքին: Ղուկաս Ժ.39-ը պատմում է Մարիամի մասին, ով «Յիսուսի ոտների մօտ նստեց, եւ լսում էր նորա խոսքերը»: Հովհաննես ԺԱ.27-ում Մարթան վկայում է Քրիստոսի մասին. «Նորան ասեց. Այո, Տեր, ես հաւատացել եմ, թէ դու ես Քրիստոսն՝ Աստուծոյ Որդին, որ պէտք է աշխարհք գայիր»: Գործք Առաքելոց Թ. 36, 39-ում ասվում է «մի աշակերտ եղած կին կար՝ անունը Տաբիթա, . . . լիքն էր բարի գործերով . . . Եւ ամեն որբեւայրիները նորա չորս կողմովը կանգնեցին . . . ցոյց էին տալիս այն հագուստները եւ այն հանդերձները որ [նա] շինում էր»: Փիբեն՝ Հռովմայեցիս ԺԶ.1-2-ում «սպասաւոր է եկեղեցու» և «շատերին խնամք է տարել»:

Հավատքի, վկայության և ծառայության այս օրինակները շարունակվում են վերջին օրերի Եկեղեցում և պաշտոնական բնույթ են ստանում Սփոփող Միության կազմակերպությամբ: Ջուլի Բ. Բեքը՝ Սփոփող Միության գերագույն նախագահը, սովորեցրել է. «Ճիշտ ինչպես Նոր Կտակարանի ժամանակներում Փրկիչը հրավիրեց Մարիամին ու Մարթային մասնակցելու Իր աշխատանքին, այս ժամանակաշրջանի կանայք պաշտոնապես լիազորված են մասնակցելու Տիրոջ աշխատանքին: . . . 1842թ. Սփոփող Միության կազմակերպմամբ համախմբվեց կանանց ուժը և Տիրոջ թագավորությունը կառուցելու նրանց յուրահատուկ հանձնարարությունը»:[1]

Մենք ավարտին կհասցնենք մեր աշխատանքը, եթե կենտրոնանանք Սփոփող Միության նպատակների վրա. մեծացնել հավատը և անձնական առաքինությունը, ամրացնել ընտանիքներն ու տները, և գտնել ու օգնել կարիքավորներին:

Ես վկայում եմ, որ Սփոփող Միությունը ի վերուստ կազմավորվեց փրկության աշխատանքին աջակցելու համար: Սփոփող Միության յուրաքանչյուր քույր կարևոր դեր ունի խաղալու այս սուրբ աշխատանքի իրականացման գործում:

Սիլվիա Հ. Ալրեդ, Սփոփող Միության գերագույն նախագահության առաջին խորհրդական:

Սուրբ գրություններից

Յովէլ Բ.28–29, Ղուկաս Ժ.38–42, Եփեսացիս Ա.10

Մեր պատմությունից

Քույր Ջուլի Բ. Բեքը սովորեցրել է, որ «Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով մենք գիտենք, որ Սփոփող Միությունը Վերականգնման պաշտոնական մաս էր»:[2] Վերականգնման գործընթացը սկսվել է Առաջին Տեսիլքով 1820թ. և շարունակվել է «տող առ տող, ցուցում առ ցուցում» (ՎևՈՒ 98.12): 1842թ. մարտի 17-ին, երբ Սփոփող Միությունը պաշտոնապես կազմավորվեց, Մարգարեն սովորեցրեց կանանց վերականգնված Եկեղեցում իրենց կարևոր տեղի մասին: Նա ասաց. «Եկեղեցին երբեք կատարելապես չէր կազմավորվել, մինչև որ կանայք այսպես կազմակերպվեցին»:[3]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ջուլի Բ. Բեք, «Իրականացնելով Սփոփող Միության նպատակը», *Լիահոնա,* Նոյեմբեր. 2008, 108:
2. Ջուլի Բ. Բեք, «Իրականացնելով Սփոփող Միության նպատակը» , 108:
3. *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 451:

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ինչո՞վ կարող եմ օգնել քույրերին այս ամիս, հետևելով Հիսուս Քրիստոսի կին աշակերտների հավատքի օրինակին:

2. Այս ամիս իմ վկայությունը ամրացնելու համար վերականգնված ավետարանի ի՞նչ ուսմունք կուսումնասիրեմ:

Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

© 2011 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/10: Թարգմանության հաստատումը. 6/10: *Visiting Teaching Message, February 2011*-ի թարգմանությունը: Armenian: 09762 201